

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտա տրութիւնը ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Հ Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ի Ր Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ե Ր

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ

Խաղաղութեան անուանով. Հեռագիրներ. — Ներքին ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Նամակ Լուսնայ. Ներքին լուսեր. — ԱՐՏԱՎԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Գեներալ Տրոյի. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուսեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Գերմանիայից.

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆՈՒԿ

Ունգարիայի մայրաքաղաք Բուդապէսում և նրա շրջակայքում տեղի ունեցած զինական-ներքին և հասարակական գործողւթիւնի մի ժողով, որ խաղաղութեան կօնգրէս անունն է կրում: Այդպիսի ժողովներ կատարվում են պարբերաբար, երբևէ տարին մի անգամ, և ներկայ ժողովը թուով եօթներորդն էր: Ժողովները նպատակն է բերնութեան ենթարկելով միջազգային և հասարակական ծանր, բարդ և կոնձուս խնդիրներ, մշակել և գտնել նրանց համար գործնական լուծում խաղաղ միջոցներով, առանց զինեղու գէնքի, առանց պատերազմի և զօրքի:

Խաղաղութիւն պահպանելու, խաղաղ ծանապարհով—ասայ այն նշանաբանը, որին ծառայում են այդ ժողովները: Դա շատ յարգելի և պատկառելի մի նշանաբան է, որ համապատասխանում է մարդկութեան ձգտումներին և քրիստոնէական հասկացողութիւններին: Եւ սակայն նա յաճախ մի միտքերական աւանդութիւն է դառնում, մի պատարուակ, որով ծածկվում են մարդկանց անգործութիւնը և անտարբերութիւնը, որով արգարացվում է մարդկանց փախուստը անձուներ քործունէութիւնից և զոհաբերութիւնից: Հարցնում ենք. ի՞նչպէս և ե՞րբ պէտք է վճռվեն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՅ

Բերլին, 27 սեպտեմբերի

Ես հաղորդեցի «Մշակի» ընթերցողներին կանանց միջազգային ժողովի նախապատրաստական գործողութիւնների և բացման մասին: Մանրամասն նկարագրել բոլոր հիմնաքերը, պատմել բոլոր զեկուցումների բովանդակութիւնը և նրանց ստիժով յայտնված զանազան կարծիքները—անկարելի է լրագրական էջերում: Ես կը բաւականանամ միայն մի քանի այնպիսի զեկուցումների մասին տեղեկութիւն տալով, որոնք աւելի ընդհանուր խնդիրներ էին չօչախում և կանանց հասարակական և քաղաքական գործունէութեան էին վերաբերում:

Ժողովի նախագահ տիկին Լինա Մօրգենշտէյնի առաջնախնդր յետոյ, ամբիւն բարձրացաւ հնօրային տիկին Մարի Շտրիտ, որը շատ շուտ գրաւեց ժողովականների ուշադրութիւնը իր զեկուցելի և ազդու ճառով: Նրա համոզված և ոգևորված խօսքերը արձագանք էին գտնում կանանց սրտերում: Նա հրաւեր էր կարգում, որ իրանկողմէն կանայք կազմակերպվեն կուի և զօրի համար, աշխատեն ձեռք բերել քաղաքական իրաւունքներ, որպէս զի կարողանան ազդել օրէնսդրութեան վրա: Ոչ մի երկրում, առանց նա, այնքան էլ խօսված ու գրված կանանց մասին, որչափ Գերմանիայում, բայց և ոչ մի տեղ այնքան քիչ է իրագործված կանայքի մէջ, որչափ նոյն Գերմանիայում, ուր կանանց հասարակական և քաղաքական զրուծիւնը շատ և անցել է: Սակայն ժամանակը պահանջում

խաղաղ ծանապարհով, օրինակ, Էլլաս-Վօտարիկայի, խաղաղական Տիբօլի, հետո կօրէպի և այլ նոյն տեսակ խնդիրներ: Խաղաղութիւն, եւրօպական ներդաշնակութիւն, միջազգային համերաշխութիւն—հիմնադր բառեր են: Եւ սակայն մի՞թէ այդ խաղաղութեան անունով չէ աշխատում արդարացի իրան եւրօպային այնպիսի խօշոր միջազգային խնդիրներում, որտեղ ոտնակոխ են լինում մարդկային ամենատարբեր իրաւունքներ և ամենաթանգ սեփականութիւններ: Խաղաղութեան զաղափարը կարող է յաղթող հանդիսանալ այն ժամանակ, երբ խաղաղութեան պաշտպանները միջոց զը գտնեն զայդ օչաղիւն, հարստահարողին և կեղեքողին: Իսկ եթէ նրանք այդ չեն անի, այլ ընդհակառակն կօչեն ուժեղին պահպանելու իր լուծը թշուառի վրա և այդպիսով խաղաղութիւն հաստատելու, այն ժամանակ այդպիսի ձեռով դրած խաղաղութեան գաղափարը կը դառնայ անբարոյական, փաստակար մի զաղափար, որի դէմ պէտք է կուել անխնայ:

Միջազգային խաղաղութեան կոնգրէսները, ի հարկէ, ոգևորված են բարձր մարդասիրական ձգտումներով: Սակայն եթէ նրանք մի կողմից կուել են մղում դէնքի և պատերազմի դէմ, միւս կողմից պէտք է նոյնչափ և գուցէ աւելի ևս սաստիկ կուել մղեն այն բանի դէմ, որ խաղաղութիւն պահպանելու զաղափարը անտէնով չը հօկանաւորվեն ոճրագործութիւններ, չը խրախուսվեն հասարակական յանցանքներ:

Հ Ն Ո Ւ Ա Գ Ի Ր Ն Ե Ր
(Խուսաղ գործակալութեան)

Կ. Պօլիս, 28 սեպտեմբերի: Պաշտօնապէս հրատարակված է, որ այն հայերը, որոնք ցան

է փոփոխութիւն: Թէ կուտուրական և թէ տրնտեսական հանգամանքները կանանց առաջն են դրել կանանց աշխատանքի և կանանց գործունէութեան խնդիրը: Ժամանակ է ինկացի և լուրջ կերպով վերաբերվել այդ խնդրին:

Օրիորդ Էլի Մէօլլէր, որ Գանիայի ներկայացուցիչն էր, խօսեց Գանիայում տեղի ունեցած կանանց չարժուիների մասին: Կանանց հարցը այնպէս առաջ է եկել 1848 թիւից յետոյ: Այդ հարցի առաջին և նշանաւոր պաշտպան հանդիսացաւ քսան տարեկան մի երիտասարդ կին՝ Մատիլդա Ֆերբէր, որ Էլլարա Բաֆաէլի նամակները՝ անունով իր գրութեանը նուիրեց կանանց հարցին մի շարք տառամատիրութիւններ: Կազմվեց Գանիայում մի ընկերութիւն՝ ուսանողուհիների պահելու և հովանաւորելու նպատակով: Հէնց առաջին օրերից աջողվեց թոյլտուութիւն ստանալ, որ կանայք յաճախեն համալսարանը: Այժմ կանանց ընտրողական իրաւունքի հարցն է, որ հերթական է դարձել Գանիայում: 1888 թիւին երկու պալատներից մէկը տուեց իր հաւանութիւնը այդ մասին, իսկ միւսը մերժեց: Կանայք անվճար գործում են, հաւատարմով կատարեալ աջողութեան:

Բարձունեսա Գրիպլենբէրգ, խօսելով Ֆինլանդիայի կանանց մասին, ասեց, որ այդտեղ կանանց կրթութեան և զարգացման հարցը շատ լուրջ կերպով է դրված և կանանց ու աղամարդկանց հաւատարմութեան սկզբունքը մեծ համակրութիւն է վայելում: Սակայն ցաւալի է, որ կանանց ընկերակցութիւններ կազմելու գործը դժուարացած է, իսկ այդպիսի ընկերակցութիւններ շատ կը նպաստէին կանանց գործին: Գրիպլենբէրգ խօսեց անգլիերէն:

Տիկին Հայդօն, որ Երկրի Հօլլանդիայից և ներկայացուցիչ էր մի ընկերութեան կողմից, պատմեց, որ նրա հայրենիքում համալսարանները բաց են կանանց համար, իսկ կանանց ընտ

կանում են զաղկել, պէտք է պարտաւորվեն երբեք այլ ևս չը վերադառնալ: Արդէն զաղկած հայերը արձակվում են թիւրքաց հպատակութիւնից, եթէ յետ չը վերադառնան ոչ ոչ երկու ամիս: Արտասահմանեան անցագրիւններով վերադարձող հայերին չի թոյլատրվի մտնել թիւրքիայի սահմաններ: Քսան տարի առաջ զաղկած հայերի վրա, նոյնպէս և հայկական կամիտեան անդամները վրա վերոյիշալ կարգադրութիւնը չէ տարածվում: Ոչ թիւրքական չըջաններից եկած հայերը չեն վայելի սրանից յետոյ ընկնելու իրաւունքները:

Կ. Պօլիս, 28 սեպտեմբերի: Պաշտօնական լուրից տրեղում է այս առաջուկները, թէ Էրզրումի մէջ 400 հայեր կենդանի պարված են, և այն տեղեկութիւնը, թէ այստեղ 200 սօֆտաներ և օֆիցներներ են կախաւորված՝ մեղադրվելով յեղափոխական ձգտումների մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆԱՄԱԿ ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 1-ին
Շատ ուղիղ են ասել, թէ՛ «Լուր աղբիւր», այն էլ անձրիի համար մատաղ անեղք: Գիւղացիները հունձը կալի մօտ գետ նոր էին հաւաքել, և կայսելով պիտի ստանային իրանց աշխատանքի պտուղը, բայց անձրեւն ու կարկուտը չեն թողնում կայսել և վերցնել ցորենը: Հունձը այս տարի անաջող է, որովհետեւ մի քանի տեղերում կարկուտը փչացրեց, իսկ աղաւթ մը նայած տեղերն էլ նուազ բերք ունեն:

Մեծ եռանդով շինում են Կարս տանող երկաթուղու գիծը: Այստեղի բանւորների մեծամասնութիւնը կազմում են տաճիկները և յոյները:

Րոզական իրաւունքներ ձեռք բերելու խնդիրը յարուցված է 40 տարի սրանից առաջ: Հօլլանդիայի կանանցից շատ շատերը գործում են հրապարակախօսութեան, գրքերի, բրօշուրների միջոցով իրանց դատի համար: Կազմվել են ընկերակցութիւններ և խմբեր, որոնք աշխատում են ժողովրդի մտնելը լաւացնելու, անտաղկութիւնը վերացնելու, ընդհանուր բարեբեր բարեխաւու և այլն:

Թիւրքի կանայք՝ զօկտօր Պաուլինա Շիֆֆ (ուղարկել էր զեկուցում, իսկ ինքը չէր եկել) և սինօրինա զօկտօրիսա Մօնտեսսօրի իրանց զեկուցումներով ցոյց տուին, որ խաղաղութեան կանանց չարժումը վերջին ժամանակներս մեծ ծաւալ է ստացել սկսած Ալպերից մինչև Սիցիլիա: Կանայք հիմնել են զարգացնել աշխատաւոր դասակարգի ազդիկների համար: Նրանք հետաքրքրվում են հասարակական խնդիրներով և հայրենիքի պաշտպանութեան համար պատրաստ են տանել զոհանքներ և անել զոհաբերութիւններ: Խաղաղութեան ի միջի պղծը, նկատված է, որ լեւոնաբնակ տեղերի կանայք աւելի ուշ և զփուարութեամբ են յարում կանանց չարժման:

Խիստ և ծայրահեղ ոճով խօսեց Աւստրիայից եկած տիկին Տերեզա Շլէսլինգեր, որ ցոյց տուեց կանանց ներկայ չարժման սերտ կապը անտեսական և սօցիալական կեանքի փոփոխութիւնների հետ: Կանանց հարցը չաղկապված է բանւորական հարցի հետ: Կանանց աշխատանքի խնդիրը հրապարակ եկաւ բանւորական խնդրի հետ, իսկ կանանց չարժումը անբաժան է կանանց աշխատանքի խնդրից: Աշխատանքի և իրաւունքի անտէնով կանայք առաջ կը գնան և կը ստանան իրանց պահանջանքները:

Իսկ Շվեյցարի ներկայացուցիչ օրիորդ Գալդեն հետաքրքրական մի զեկուցում մէջ յայտնեց, որ Շվեյցարի կանայք նշանաւոր առաջադիմութիւն են արել ոչ միայն կրթական և հա

րը: Չը զիտենք, ինչո՞ւ լուր տարածվեց տաճիկների մէջ, որ իբր թէ զօր կառուցումը վերջանալուց յետոյ, հայերը պէտք է կոտորեն տաճիկներին և նրանց աշխատած փողերը կողպատեն և իբր թէ զրանով վրէժխնդիր լինեն թիւրքահայերի համար: Այդ լուրի հաւանականութեանը նպաստեց հետեւալ դէպքը:

Մի գիշեր, երբ մի քանի բանւորներ փող ըստացած են լինում, յոյները յարձակվում են երեք տաճիկների վրա և նրանց վիրաւորելով տանում են, ինչպէս իրանք են ասում, 120 լուրլի: Մինչև այդ դէպքը տաճիկները հիմք չուէին զանգաւակելու, իսկ զրանից յետոյ բոլոր բանւոր տաճիկները թողնելով գործը, գնացին Ղարաբլիսա և զանգաւակեցին երբորդ մասի գլխաւորին՝ խնդրելով նրա պաշտպանութիւնը հայերի և յոյների դէմ, որովհետեւ նրանք կարծում էին, թէ արդէն յոյները միացել են հայերի հետ: Պ. կառավարիչը, տեղեկանալով հաւատարմի մարդկանցից, որ այդ լուրը սխալ է, արձակեց տաճիկներին, ասելով. «Այդպիսի բան չը կայ, գնացէ՛ք, ուղում էք աշխատեցէ՛ք, չէք ուղում, վերադարձէ՛ք հայրենիք»: Ասում են, որ այդ լուրը դիտմամբ տարածել է մի տաճիկ և չուտով փախել Թիւրքիա: Տաճիկները այժմ խուճը խուճը վերադառնում են հայրենիք:

Սրանից երեք տարի առաջ Գետադեաւ հայ գիւղի քահանաներից մէկը, իր եղբոր յիշատակին, նուիրում է նոյն գիւղի եկեղեցուն 3000 լուրլի, մեր թիւին առաջնորդի ներկայութեամբ, այն ժամանակ, երբ նա կոնսիստօրիայից պէտք է վկայական ստանար իր եղբոր ստացուածքը ժառանգելու համար: Բայց ահա երեք տարի է, որ քահանան չէ բարեհաճում աւելի խոստացած նուէրը: Նրա ընկեր քահանան մի քանի անգամ զիմում է առաջնորդին, բայց մինչև հի

տարական, այլ և քաղաքական ասպարէզում: Շվեյցարիները մասնակցում են ընտրութիւններին և անմասն չեն իրանց երկրի քաղաքական առաջադիմութեան գործում:

Ընդհանուր խնդիրներից յետոյ, ժողովներում մեծ տեղ բռնեցին կրթութեան, անտեսական և արհեստագիտական ուսման խնդիրները, իսկ զրանից յետոյ բանւորական հարցը, անուղի, զգեստի և այլ հարցեր: Պէտք է նկատել, որ սօցիալ-դէմօկրատ կանանց ներկայացուցիչները մեծ ապաւորութիւն թողեցին ժողովի վրա: Բացի կօնգրէսի նիստերին մասնակցելուց, նրանք ունեցան իրանց մասնաւոր նիստերը կօնգրէսից դուրս՝ ծանօթացնելու համար bürgerliche կանանց իրանց պահանջների և ծրագրերների հետ: Ինչ կրակոտ զգացմունքով էին խօսում այդ կին-հեռւօրները իրանց ընկած, թշուառացած քոյրերի մասին. բայց համակրական բուռն արտայայտութիւնների հետ միասին, նրանք ստացան և սուղօցներ. նրանք ծաղրի ենթարկվեցին ոչ միայն աղամարդկանց մի մասից, այլ և կանանցից, որով մի անգամ ևս ապացուցվեց, որ կինը կանանց խնդրում աւելի յետադէմ է, քան աղամարդը: Ո՛վքեր էին սակայն այդ հեռւօր կանայք, որ այդքան արձակ համարձակ խօսում էին և պահանջներ էին անում իրանց քոյրերի և եղբայրների համար: Գրանց մէջ կային հասարակ բանւոր կանայք, որոնցից մէկը, որ կուսակցութեան նախագահ էր, սղիտակ գոզոցով էր մասնակցում ժողովին. կային կանայք և բարձր ինտելիգենտ և նոյն իսկ բուրժուա դասակարգից: Բանւոր կանանց խնդրի պաշտպանողներից աչքը էին ընկնում Վիլհելմայի ներկայացուցիչը, Խաղաղայից եկած մի ջանիլ օրիորդ, որը ինքն անձամբ մասնակցում է բանւորական շարժումներին, և բերլինցի նախկին պրօֆէսօր Գիլիցկիի կինը, որ այժմ ամուսնացել է սօցիալ

նակովում են, թէն ոչ առաջվայ պէս մեծ չափով: Այժմ կառնաւորում են բանկիրներին և ուրիշ յայտնի անձանց:

«Köln. Zeitung» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ այս օրերս սուլթանը հրաւիրեց իր մօտ գերմանական զեւոյան բարձր Սաուրմա-կշին: Այդ խօսակցութեան հետեանքն այն էր, որ սուլթանը հրամայեց դադարեցնել չառ հայերի արտօրը դէպի Փարս-Ասիա:

Չը նայելով «Press Association» լրագրի կողմից եղած հերքմանը, անգլիական լրագրիները (ի միջի ալոց «Standard» և «Daily Mail») հաւատացնում են, որ մեծ պետութիւնների մէջ համարեա արդէն համաձայնութիւն է կայացած թիւրքիայի վերաբերութեամբ: Այդ համաձայնութիւնը կը դադարեցնէ թիւրքիան կտոր կը սոր անելու գործը և ամենից առաջ կը դնի լէֆօրմների հարցը:

«Berliner Tageblatt» լրագիրը պնդում է, որ մեծ պետութիւնները ներկայումս աւելի քան երբևէ ինքն համաձայն են իրար մէջ և ուսումնական գործ դնել Բ. Գրան լրագրի հայտնի լուծումն աջակցեցնելու համար:

Կ. Պոլսի «Corr. Bur.»-ին հետագրում են. «Հիւսիսային Ամէրիկայի Միացեալ-Նահանգների, Սպանիայի, Հոլանդիայի և Յունաստանի կառավարութիւնները ցանկութիւն յայտնեցին, որպէս զի թոյլ տրվի իրանց մի-մի պահակաւու ուղարկել թիւրքիայի ջրերը: Բ. Գրան մերժեց նը-րանց պահանջը արն հիման վրա, թէ այդ իրաւունքը տրված է միայն Բերլինի գաշապիրը ստորագրող պետութիւններին:»

«Central News» հաղորդում է, որ սեպտեմբերի 21-ին լորդ Սուրբի-րի երկարատե խօսակցութիւն ունեցաւ ուստաց զեւոյանի հետ, և ապա ֆրանսիական զեւոյանի հետ: Այդ վերջինի հետ խօսակցութիւնը երկու ժամից աւելի տևեց:

Լօնդոնից ուստաց լրագիրներին գրում են. «Daily Chronicle» պնդում է, որ սեպտեմբերի 29-ին, կէսօրից յետոյ, թագաւոր Կայսրը երկրորդ անգամ բաղնաւորացիները երկար խօսակցութեամբ մարկիզ Սուրբի-րիին: Այդ խօսակցութիւնների մանրամասնութիւնները ոչ ոք չը գիտէ, բայց «Daily Chronicle» լրագրի թղթակիցը հաւատացնում է, թէ ինքն ճիշդ տեղեկութիւններ ունի, որ այդ խօսակցութիւնների մէջ որոշված են Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ կայանալի համաձայնութեան գլխաւոր հիմքերը՝ գործադնութեան եղանակի մասին Արեւելքում: Այդ համաձայնութեան մանրամասնութիւնները կը մշակի անգլո-ուստական զիւլլամախան:

Եւրոպայի լրագիրը, իր մէջ առաջնորդող յօդուածում, պայծառ և ուրախ է նայում ապագայի վրա, հաստատ յայտնում Բուսաստանի և Անգլիայի համաձայնութեան վրա և այդպիսի համաձայնութեան նշան համարում է այն, որ ֆրանսիական զեւոյան կամքօք առաջադրութիւններ արաւ սուլթանին, որի մասին հետագիրը հաղորդեց:

«Ռուսաստանը քաղաքական քաղաքավարութիւնի» Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի համարաշխ գործողութիւնների առաջին քայլը թույլատրեց անել Ֆրանսիային: Անգլիան, այդպիսով, երկրորդական դեր կը խաղայ հայց հարցի լուծման և առհասարակ իրերի գրութեան լուծման մէջ թիւրքիայում, որը, «Daily Chronicle» լրագրի տեղեկութիւնների համեմատ, հետեանք է թագաւոր Կայսրի պայմանի, որը Բալթիկում հասկացնել տուեց, թէ ուստաց կառավարութիւնը պատրաստ է Անգլիայի հետ համաձայն գործել, եթէ վերջինը իր գործողութեան եղանակով կը հեռացնէ այն կասկածը, թէ ինքն անձնական շահերի համար չէ գործում:

Լօնդոնի քաղաքական չրջաններում հաւատացնում են, որ Կ. Պոլսի զեւոյան սըր Կերրի յետ կը կանչվի, որպէս մի մարդ, որ ցանկալի աշտողութիւններ չունեցաւ արեւելեան հարցում:

«Բէյքէրի գործակալութեանը» Կ. Պոլսից հա-

ղորդում են, սեպտեմբերի 1-ին, որ սուլթանի իրադէսով հրամանագրվում է նաւատորմ կազմակերպել տարւոյ տօրակցային նաւակներից Կար-դանէի նեղուցը պաշտպանելու համար: Այդ միջոցը ձեռնարկված է ուստ գեներալ Չիլաւէ-վի խորհրդով, որը նորերս քննեց Կարդանէի ամրութիւնները:

Որովհետեւ կաթոլիկների պատրիարք Ազարեանի իրաւասութեան տակ գտնվում են մօտ 100 000 հայ-կաթոլիկներ, այդ պատճառով պատգել, ի նկատի առնելով վերջին խառնակութիւնները, տեղեկութիւններ պահանջեց նրանց գրութեան մասին: «Italie» լրագրում հրատարակված է Ազարեանի ուղարկած հետաքրքիր պատասխանը պապին:

Հայ-կաթոլիկները, նրա խօսքով, անպակասարկելի էին պահում իրանց, չը նայելով խառնակ ժամանակին: Պատրիարքը խառնակում է, որ խոսակցութիւնների պատճառներից մէկը հայկական կոմիտեաների ագիտացիան է, որոնք քաղաքական նպատակների են ձգում: Այդ խառնակութիւնը, սակայն, չէ արգելում Ազարեանից խառնակութիւնների գլխաւոր պատասխանատուութիւնը գցել «յայտնակցած մահմետականների» վրա, որոնք ներշնչված են բուսականութեան ոգով: Այժմ էլ իւրաքանչիւր քաղց կարելի է վստահեալ նոր խառնակութիւններից: Բայց Բ. Գրանը, վերջապէս, ձեռք առաւ անհրաժեշտ, մինչև անգամ խիստ միջոցներ՝ նոր խառնակութիւնների առաջն առնելու համար: Ազարեանի խօսքով, հայ-կաթոլիկները ամենին մասնակից չեն յեղափոխական շարժման. նա նրանց համար երաշխաւոր է ապագայում ևս: Չը նայելով իրանց օրինակելի ընկալքին, հայ-կաթոլիկները սարսափելի վնասներ կրեցին, այնպէս որ նրանց դրա թիւնը սարսափելի ծանր է:

«Սուրբ հայրը, «Italie» լրագրի խօսքով, արտասուեց այդ զեկուցումը կարողաւ ժամանակ և պրօպագանդայի միաբանութեանը հրաման տուեց չուստացնել օգնութիւն հասցնել պատրիարք Ազարեանին և նրա հօտին:

Կ. Պոլսի ազգայնակութեան բոլոր դասակարգերը, նոյնպէս և կառավարութիւնը, ցանկաւում են ուրբան կարելի է չուտ վերջ դնել այն ճգնաժամին, որ տիրապետում է այժմ թիւրքիայի մայրաքաղաքում: Կառավարութիւնը, ինչպէս առում են, այն միտքը յայտնեց, թէ բէֆօրմները անցապաղ պէտք է մտցնվեն, եթէ հայ դժգոհ տարրերը կը դադարեն յովանդատել սերմանելուց: Կատարելապէս ուրիշ տեսակետ ունեն Կ. Պոլսի օտարազգայնակ կոլոնիալները: Ֆրանսիական զեւոյան Կամբոնի հետ միասին վերջինը, նորերս սուլթանի հետ խօսակցելու ժամանակ, յայտնեց, թէ բէֆօրմները անցապաղ պէտք է մտցնվեն, իսկ յուզմունքը և անհանգստութիւնը իրանց իրանց կը դադարեն: Ինչ կը լինի վերջը և ինչպէս կը պահի իրան Բ. Գրանը — անյայտ է:

Լօնդոնից, սեպտեմբերի 24-ին Ռուստաց գործակալութիւնը հետագրում է մայրաքաղաքի լրագիրներին հետեանքը. «Եւրպայում Հարկօրտ իր ընտրողների առաջ արտասանեց մի ճառ, որի մէջ մասնաւորապէս արաւ, թէ այն հետաքրքրութիւնը, որ հասարակաց կարծիքը ցոյց է տալիս արտաքին գործերի վերաբերմամբ, միշտ մի յուզելի երևոյթ է կազմում: Անգլիայի դէպի թիւրքիան ունեցած յարաբերութեան վրա պէտք է նայել պատմական տեսակետից: Կրիմի պատերազմի ժամանակ Անգլիան կոխ էր մղում Ռուսական պետութեան ամբողջութիւնը պահպանելու համար, բայց այժմ անգլիացիները հեռու են այդ քաղաքականութեան հետեանք: մարքի: Թիւրքիայի դէմ յարուցված այժմեան ագիտացիան բոլորում է այն համոզմունքից, որ եթէ թիւրքիան կարողանում է չարիքներ գործել, այդ մեծ մասամբ Անգլիայի մեղն է, որ առաջվայ ժամանակները ձգտում էր պաշտպանել թիւրքիան ուստաց ազդեցութիւնից: Սակայն այժմ ուստաց ազդեցութիւնը Կ. Պոլսում գերակշռող է: Այսպէս Հարկօրտ ցաւ յայտնեց դէպի Ռուսաստանն ունեցած անվստահութեան առիթով: Հռետորը կարելի է համարում պետութիւնների միաբանութիւնը թիւրքաց հարցը կանոնաւորելու համար: Ի վերջոյ Հարկօրտ ցանկութիւն յայտնեց, որ կառավարութիւնը բացատրութիւններ

տալ գործերի իսկական դրութեան մասին, որ մինչև այժմ ոչ ոքին յայտնի չէ: Ռուսաստանի հետ ամբողջ արեւելեան հարցի վերաբերմամբ համաձայնութիւն կայացնելու մասին Հարկօրտ խօսեց դրականապէս, և առաջ որ Արիստի Ռուսաստանի հետ համեմատել և բարեկամարար գործողութիւններ սկսելու առաջին քայլը պիտի լինի Կիւյրոսի գաշապիրութեան ոչնչացումը:»

ԳԵՆԵՐԱԼ ՏՐՈՇԵՒԻ

Գեներալ Տրօշիւի մահը, որի մասին հաղորդեց հետագիրը, մի զարմանալի զուգարկութեամբ տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ Պարիզը տօնում է «ուստաց շաբաթը», այսինքն այն օրերը, երբ Ռուսաց Կայսերական Զոյգը Ֆրանսիայում է գտնվում և աւելի հանդիսաւոր տեղը է տալիս ֆրանս ուստական գաշապիրութեանը: Զուգարկութիւն մինչև տեւում էր, այն հանգամանքի մէջ, որ գեներալ Տրօշիւի անունը բնականաբար առաջ է գալիս 1870 թականը, Ֆրանսիայի դժբախտութեան տարին, երբ Տրօշիւ կը բուսում էր մէջ ֆրանսիացու կատաղի, բայց անօգուտ հայրենասիրական վրէժխնդրութեան բոլոր տեսչանքները:

Տրօշիւ մի հանձնարեղ զորավար էր: Նա անուն հանեց այն ժամանակ, երբ ամբողջ Ֆրանսիան ընկած էր անողորմ Բիսմարկի ոտների տակ: Ի դուր էր նա աշխատում պաշտպանել իր պատիւը, ի դուր էր օգնութեան կանչում եւրպական պետութիւնները: Արեւան և երկաթի բաղադրականութիւնը Բիսմարկին դարձրել էր մի նոր Բանապ, որ ոչինչ գոյթ, ոչինչ մեծահոգութիւն չէր ցոյց տալիս. նա վճռել էր Ֆրանսիան ոտնակոխ անել այն առիթն, որ նա դառնայ մի փոքրիկ, խեղճ պետութիւն, Լեւոպայի մի անկիւնում: Գեներալական զօրքը ինչպէս մի զարհուրելի լաւա քանդում, ոչնչացնում էր Ֆրանսիան, նրա առաջ ոչինչ չէր դիմանում. արիւն-նահեղութիւնը հասել էր աներկակայելի չափերին: Եւ որքան զարհուրելի էր դառնում արշաւող թշնամին, այնքան ֆրանսիացու մէջ բուրբուրում էր հայրենասիրութիւնը, երկրի մի ծայրից մինչև միւս ծայրը կոխը օրհասական էր, անողորմ: Ֆրանսիացիներ, մենակ և անօգնական մնացած, մեռնում էր սիրով, բայց դրանով որ և է իրական օգուտ հասցնել իր հայրենիքին չէր կարողանում: Ամբողջ Ֆրանսիան այդ ժամանակ մի զինուորի անուն էր արտասանում. դա Պարիզի հրամանատար Տրօշիւն էր: Նրանից էին սպասում մի երեւելի հրաշք, որ կարողանար լիքիւ Ֆրանսիայի պատիւը: Հաւատում էին, որ այդ մարդը յանկարծ կը զարթոնէր Նապոլէօն I-ի զօրաբանակները և յայտնութեան գալիսին կը դնէ Ֆրանսիայի ճակատին: Բայց ապաւորվել էին այդ յայտերը: Տրօշիւ, չը նայած իր եռանդին, իր ջնքմ հայրենասիրութեան, անկարող էր խորտակել Բիսմարկի ոյթը: Մի քանի անգամ նա փրձ արաւ դուրս բերել Պարիզից իր բանակը, բայց ոչինչ աշտողութիւն չունեցաւ: Հաւատալովը անօրինակ էր, որ Ֆրանսիան մինչև վերջը իսկ զաւոնութեան բաժակը Պարիզը բաւարարեղ եղաւ և վերջապէս ստիպված էր ընդունել Բիսմարկի սարսափելի պայմանները: Ֆրանսիացիներ տեսնելով իր ամօթը, իր զարհուրելի պարտութիւնը, սկսեց մեղադրել Տրօշիւին, նրան համարելով այդ անպատուութեան պատճառ:—Բայց, ի հարկէ, նա սխալված էր: Տրօշիւն արաւ այն, ինչ որ կարելի էր անել այն սարսափելի տարին: Նա հրաւիր տարածեց, ոտքի կանգնեցրեց այն բոլոր քաղաքացիներին, որոնք կարող էին զենք վերցնել և կուսել: Ֆրանսիայի արիւնաներկ զաշտերի, ֆրանսիացի անպատուած մայրերի ու քոյրերի, կատարված ու տանված խաղաղ քաղաքացիների անունից արձակված այդ հրաւերը չառ բան արաւ՝ հերոսական մահ առնելի համար պաշտելի դարձնելու համար, բայց Բիսմարկի աշտողութիւններին դիմադրել չը կարողացաւ: Պատմական անելի դէպքը տեղի ունեցաւ անկարելից Լեւոպայի աչքի առաջ: Տրօշիւ հեռացաւ աստաղելից և այն ժամանակից մասնաւոր կեանք էր վարում: Այժմ գերեզման իջաւ նա, տանելով իր հետ թշուառութիւնների այն տարվալ յիշատակները:

Իսկ նրա գերեզմանի մօտ Ֆրանսիան տօնում է իր նոր զինուոր միջազգային գործերի մէջ: Գտան և հինգ տարի նա չը գիտէր թէ ինչ անի, որ մեծ պետութեան արժանի մի զինք գրաւէ: Եւ այժմ, երբ Ռուսաստանի հետ իր ունեցած գաշապիրութիւնը այլ ևս գաղտնիք չէ, նա բացարձակ յայտնում է, որ 1870-ին կորցրածը ստանում է այժմ: Ռուսաստանին մօտենալը կատարվեց երկար ժամանակվայ ընթացքում: Գեներալ Տրօշիւ, այն ժամանակ, երբ Տրօշիւ յոյս առէր թէ Պարիզի պատերի ետեւից մի ոչնչացնող հարուած պիտի հասցնէ անողորմ թշնամուն, Ֆրանսիան կուստից ազատելու համար Պետերբուրգում նա լսեց լոկ համակրական խօսքեր, իսկ գործնական օգնութեան յոյսը կորցրեց: 1875 թ.ին Բիսմարկի նորից ուղեց յարձակվել Ֆրանսիայի վրա և վերջնականապէս մահնալ դատապարտել նրան: Բայց Կայսր Ալեքսանդր II արգելեց այդ փորձը: Ֆրանսիան այդ ժամանակից հակացաւ, որ իր պաշտպանը Ռուսաստանն է: Բայց և այդպէս նա գեներալ Տրօշիւն փորձ չէր անում, իսկ 1876—1878 թ.ներին մենք տեսնում ենք Ֆրանսիան Ռուսաստանին հակադրվող պետութիւնների շարքում, երբ վերջինս բաղանեան քրիստոնեաներին թիւրքաց լուծից ազատելու համար ոչինչ միջոց չէր խնայում:—Միայն այն ժամանակ, երբ երեքսեանեան գաշապիրութիւնը սպառնալից կերպարանք ստացաւ, Ֆրանսիան բոլորովին մօտեցաւ Ռուսաստանին: Կայսր Ալեքսանդր III այդ մերձեցման հիմք դրեց, իսկ նրա սրղիւն, Կայսր Նիկոլայ II հանդիսաւոր կերպով, ամբողջ աշխարհի առաջ հաստատեց, որ Ֆրանսիան և Ռուսաստանը մի են միջազգային բոլոր հարցերում: Այդ մենք տեսնեց այն վառուոր, դեռ նմանը չը տեսնված շքեղ տնների ժամանակ, որ պատրաստեց Ֆրանսիան Ռուսաստանի լծակալին ընդունելու և իր անկեղծ զգացմունքները յրան յայտնելու համար:

Ֆրանսիան միաբերան վկայում է, որ իր պատմութեան մէջ մի նոր զարագչան է բացվել: Ապագան կը բերէ փառսեր այդ վկայութիւնը հաստատելու համար:

ՆԱՄԱՍԱ ՊԱՐՍԱՍՍԱՆԻՅ

Թաւրիդ, սեպտեմբերի 15-ին

Հացի խնդիրը պատմական զուգնում նոր յուզում է առաջ բերել: Նոր նահանգապետ Ամինը-Գօվան, իշխանութիւնը ձեռք առնելու առաջին օրից իսկ հրամայում է բոլոր ամբար-դաններին (ամբարացած ցորեն ունեցողներին) և հացադործներին, որ ցորենն ու հացը վաճառեն լիարժէք 12 շահով: Լսելով այդ անողորմ հրամանը, ամբարդարները վեր են առնում 1,500 թուման, իսկ հացադործները 500 թուման և գնում են Ամինը-Գօվայի մօտ, նրան կաշառելու մաքով և խնդրում են նահանգապետից, որ թոյլ տայ իրանց ցորենն ու հացը 16 շահով վաճառել: Ամինը-Գօվան, անպատուելով ճանապարհ է գցում նրանց և ասում. «Գողը ձեզ պահեցէք. ինչ որ հրամայում եմ ձեզ, այնպէս էլ պէտք է անէք: Խնդրատուները դուրս են գնում Ամինը-Գօվայի մօտից և գալիս ներկայանում են թագաւորանիդին ու յայտնում եղելութիւնը: «Նա չէ հասկանում,—ասում է թագաւորանիդը, լսելով 2,000 թումանի ձայնը,—գնացէ՛ք այսուհետ 16 շահով ծախեցէ՛ք ցորենն ու հացը:»

Այս լսելով Ամինը-Գօվան, հետագրով հրաւարական է տալիս թէ՛հրան, որաւից նոյնպէս հետագրով յայտնվում է, որ Ամինը-Գօվան պիտի կառավարէ ամբողջ Ասորպատականը, ուրիշ ոչ ոք իրաւունք չունի խառնվելու նրա գործերի մէջ, և պահանջվում է թագաւորանիդի թաւրիդից ուղեւորվել դէպի թէ՛հրան: Թագաւորանիդը պատասխանում է, թէ 3,000 թուման պարտք ունեմ և 2,000 թուման ճանապարհածախն է հարկաւոր, սուէք, որ կարողանամ թաւրիդից հեռանալ: Այժմ լսում ենք, որ թագաւորանիդը պատրաստվում է քաղաքից մեկնելու, իսկ Ամինը-Գօվան գեներալն ու մի գործի չէ ձեռնարկում:

Մեր ուսումնաբանները բացվել են միայնաւ ծրագրով. ուսուցչական խումբը կողմ ու պատրաստ է. գաղափարութիւնները սկսում են վաբար առ փոքր կանոնաւորվել:

Արշակունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայից հեռագրում են. «Կրեմլինից» արտասահմանական փոխադարձությունները իրար հակադրվում են. «Կրեմլինից» հեռագրում են. «Կրեմլինից» արտասահմանական փոխադարձությունները իրար հակադրվում են. «Կրեմլինից» արտասահմանական փոխադարձությունները իրար հակադրվում են.

—Մի քանի լրագրողներ հաղորդում են, որ իրենց լրագրողական տարրերը իրար հակադրվում են. «Կրեմլինից» արտասահմանական փոխադարձությունները իրար հակադրվում են. «Կրեմլինից» արտասահմանական փոխադարձությունները իրար հակադրվում են.

—Վ. Պոլսից հեռագրում են, որ բազմադարյան լուրեր են տարածված այն 150.000 լիբանի մասին, որ սուլթանը ընծայեց թիւրքաց ֆինանսական վարչությանը: Թիւրքաց աղբիւրից բերելով տեղեկություններ համեմատ, այդ փողերը յատկացրված են մի քանի ժամանակ արդէն ուժեղ չը ստացող պաշտոնեաներին. դիպուկատիպական չըբաններում պատող լուրերի համեմատ, այդ փողը պէտք է վճարվի այն օտարահպատակ վաճառականներին, որոնք վերջերս վնասներ են կրել Վ. Պոլսի խառնակությունների ժամանակ:

—Թիւրքաց ներքին գործերի մինիստրական պաշտոնեաները ստացան յուրիս ամսվայ ուժեղ կէտը: Պաշտոնեաները մեծ անհանգստություն մէջ են: Արտասահմանական թիւրքաց ներկայացուցիչներին ստիպողական պահանջներ են լինում փող ուղարկելու մասին:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

«Daily News» լրագիրը հաղորդում է, որ սուլթանը Արաբիա քաղաքից իր երկրորդ կնոջը, Նուրիսին և մի քանի պալատականներին և ուրիշ անձանց: Պատճառը հետեւեալ հանգամանքն էր. Նուրիս սուլթանը իր սեղանի վրա դառն մի նամակ, որի մէջ մատնացոյց էր արված նրա պեման անմիա և չիքնասպան քաղաքականության վրա: Յետոյ ինչպէս երևաց, նամակը դրել էր Աբդուլ-Համիդի երկրորդ կնոջ:

Անցեալ չորս շաբաթական Paisley քաղաքում բացվեց յատկապէս ազգային բանաստեղծ Բորթո Քլարկի արձանը: Արձանը դրված է քաղաքային այգում: Արձանի բացման ժամանակ լուրջ փողերի ձուռ արտասանեց ի պատիւ Բորթոյի:

Լրագիրները մի առանձին շնչով նկարագրում են միջազգային պատերազմական նաւատորմը, որ այժմ գտնվում է Թիւրքիայի ջրերում: Այդտեղ Անգլիան սենի 27 մեծ և փոքր մարտանաւեր, իտալիան՝ 7 հատ, Աւստրո-Ունգարիան՝ 2 հատ, Գերմանիան՝ 5 հատ, Սիւաբիա Նաւագ-ները՝ չորս հատ, Ֆրանսիան՝ 7 հատ, Ռուսաստանը՝ 6 հատ:

Պատմութիւնը, նոյն իսկ ամենամօտիկ անցեալի պատմութիւնը, ցոյց է տալիս, որ եւրոպական նաւերը շատ անգամ են գնացել Թիւրքաց ջրերը և յետ դարձել մի և նոյն ճանապարհով: Եւ այս հանգամանքը առիթ է տուել հանգուցեալ երգիծաբան Պարոնեանին ասել. «Աւելի լաւ չէր լինի, եթէ եւրոպական պետութիւնները Պոլսի ուղարկէին իրանց մարտանաւեր լուսանկարները»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻՉ, 26 սեպտեմբերի: Ալեքսանդր III կայսրի կամուրջի հիմնադրութեան հանդէսը: Ժողովրդի ահագին բազմութիւն, 13.000 հրաւիրածներ կան վրանի տակ, պառագամաւորներ, սենատորներ սպասում են Նոյա Մեծութիւնների գալուտեան: Նոյա Մեծութիւնները գալիս են 3 ժամին կէսօրից յետոյ: Ֆոր դիմաւորում է Նոյա Մեծութիւններին, զուլի է տալիս Նրանց: Առեւտրական մինիստրը հետեւեալ ձառն է արտասանում. «Թագաւոր, Ֆրանսիան ցանկացաւ արձան դնել Ձեր Օգոստոսիտ ընդդէմ: Իմ մայրաքաղաքի զինուոր արձաններից մէկը: Կառավարութեան անունից դիմում եմ Ձեր Մեծութիւններին խնդրելով ընդունել այդ նուիրաբերութիւնը, որ առում է ամբողջ ժողովուրդը և հանրապետութեան նախադրանք հետ սրտախի Ալեքսանդր III-ի կամուրջի առաջին բարձր դնել, որ պէտք է միանշանակ Պարիզը 1900 թվի ցուցահանդէսի հետ: Այդպիսով, մեծ կուլտուրական գործը, որին մենք ձեռնարկում ենք, կը ստանայ Ձեր Մեծութիւններից Բարձրագոյն հաւատութիւն կայսրի և կը ընդի կայսրուհու ողորմած հովանաւորութեան առկա: Քաղաքը դրվեց և մօրճով խիցցին Նոյա Մեծութիւնները: Այս թագաւորը վերջերից գրիչը, և եռանդոտ կերպով ստորագրեց «Նիկոլայ»:

յետոյ տուեց զրիչը կայսրուհուն, որը ստորագրեց «Ալեքսանդր»։ Երբ Ֆորն էլ ստորագրեց, թագաւորը ցանկացաւ տեսնել ցուցահանդէսի բարձրագոյն կառավարիչներին: Հանդէսը վերջացաւ ուստաց օրհներգով և մարտնչիկով: Այսպէս Նոյա Մեծութիւնները և նախագահ Ֆոր գնացին դրամատուրգի տունը:

ՏՈՒՐ, 26 սեպտեմբերի: Գնեւրալ Տրոյի վախճանակեց:

ՊԱՐԻՉ, 26 սեպտեմբերի: Թագուհին և հանրապետութեան նախագահը 10 1/2 ժամին գնացին Նայելու Լուվրի թանգարանը:

ՊԱՐԻՉ, 27 սեպտեմբերի: Ալեքսանդր Նոյա Մեծութիւնների մօտ նախաճաշիկ էր 60 անձանց համար: 2 ժամին Նոյա Մեծութիւնները ձիով գնացան Սէվր: Թագաւորը կայսրը 100.000 ֆրանկ չորհրդեղ Պարիզի աղքատներին:

Թագաւորը հրամայեց ոսկէ ստակ պատրաստել կարմիր գերեզմանի համար. սրակի վրա զըրված է. «Կարմիր Նիկոլայ II-ից»:

ՊԱՐԻՉ, 27 սեպտեմբերի: 23 1/2 ժամին Նոյա Մեծութիւնները ժամանեցին Սէվր և ողջունվեցին բազմաթիւ ամուսնից: Քաղաքը շատ գեղեցիկ է դարձրել: Նոյա Մեծութիւնները այցելեցին յախճապակեայ գործարանը: 20 րոպէից յետոյ կօրով գնաց Սէվր-Ալու պարկով:

ՊԱՐԻՉ, 27 սեպտեմբերի: Նոյա Մեծութիւնների ճանապարհ ընկնելու ժամանակ ամբողջ օտարիկ ստուարացաւ: Շատերը սպասում էին առաւօտեան 7 ժամից վերջին անգամ ողջունելու թագաւորին և թագուհուն: Երբ պահակախումբը երեսց, լսվում են ողբերկած շուրաներ, կանաչ շորով մէկ թափափանցները աղաղակելով. «Թագուհի, ցանաթիւն: Կտքերը լցվում են ծաղիկներով: Ելիսեան դաշտերի վրա ամբողջ անում է: Բանուրները գլխարկները շարժելով աղաղակում են «Կեցցէ թագաւորը», թագուհին ժպտում է, թագաւորը դուրս է տալիս: Ամբողջ Պարիզը ցանկանում է հրաժեշտ տալ Նոյա Մեծութիւններին: Թագաւորը և թագուհին շատ զգացված են դրանով: Նախագահ Ֆոր փայլում է ուրախութիւնից:

ՎԵՐՍԱԼ, 27 սեպտեմբերի: Նոյա Մեծութիւնները պալատ հասան 3 1/2 ժամին: Զօրքերը զինուորական պատիւներ տուեցին: Քաղաքը զարդարված է դրօշակներով: Նոյա Մեծութիւնները և նախագահը Նայելու վերադառնալիս այդին և պարկը: Նոյա Մեծութիւնները հեռացան Լիւզովիլ XIV և Լիւզովիլ XV ի սենեակները:

ՎԵՐՍԱԼ, 27 սեպտեմբերի: 63 1/4 ժամին Մեծ Խլխանի Օլգա Նիկոլայովնա ձեռքերի վրա տարվեց կայսերական գնացքը:

7 ժամին Կլոնների դալէրէում տեղի ունեցաւ ճաշ 125 հոգու համար: Ֆորն ալ կողմը հստակ էր թագուհին, սպիտակ գլխուսով և աղանդեալ դիպուկային: Նախագահի ձախ կողմը հստակ էր տիկին Բրիտան: Թագաւորը ֆրակով և շաւարտով, լէզնիսի: Ժայռաւորով հստակ էր Ֆորի դիմաց՝ ալ կողմը ունենալով տիկին Ֆորին, ձախ կողմը՝ Լուբլին: Ներկայ էին բոլոր մինիստրները, նախագահական դիւանապետը կարիւրների անդամները և օֆիցերները:

10 ժամին սկսեց կոնցերտ, թագաւորը ձեռք առաջարկեց տիկին Ֆորին, նախագահը՝ թագուհուն: Կոնցերտից յետոյ, կօրով ռուսական դէպի երկաթուղու կայարանը, ուր ժամանեց 11 1/4 ժամին: Ֆոր համբուրեց թագուհու ձեռքը, սեղմեց թագաւորի ձեռքը, և ճանապարհ գցեց մինչև վազոն: Ամբողջ կայարանի շուրջը ողջունեց Նոյա Մեծութիւններին բացակայութիւններով: Երբ գնացքը դանդաղ կերպով սկսեց հեռանալ, զրօյակը խոնարհվեց կայսերական վազոնի առջև:

ՊԱՐԻՉ, 27 սեպտեմբերի: Շաբաթի, 9 ժամին առաւօտեան, Նոյա Մեծութիւններին սպասում են Դարձաւորում, ուր թագաւորը և թագուհին հիւր կը լինեն Դարձաւորի մեծ դըսի, կայսրուհու եղբոր մօտ:

ՇԱՆՏԻ ԲԱՆԱԿ, 27 սեպտեմբերի: Ամբողջ գիշերը սաստիկ անձրև էր գալիս, առաւօտեան 7 ժամին դադարեց: 10 ժամին հաւաքեցին արդէն 150.000 հանդիսատեսներից տեղի Ներկայ են 3.090 զինեալներ, շտաբ և օբէր-օֆիցերներ, 66.758 զինուորներ, 18.679 ձիեր և 1060 թնդառնութիւն: Կօրով ռուսական դէպի գօրանանդէս: Զօրանանդէսից յետոյ, Նոյա Մեծութիւնները և Ֆոր վերադարձան կառավ զինաւոր բանակը, ուր նախաճաշ էր պատրաստված 400 անձանց համար: Ջաշին հրաւիրված էին Բրիտան և Սոյի գնեւրալները, դեսպանները, ուստաց զեւանդի կնիք, Նայելու և թագաւորի ամուսնի անդամները: Գնեւրալ ժամանակ Ֆոր և թագաւորը միմեանց կենացները խմեցին: 5 1/4 ժամին կայսերական կօրով գլխուոր բանակից ճանապարհ ընկաւ դէպի Բուխ կայարանը: Կայարանում թագաւորը հրաժեշտ տուց մինիստրներին, Լուբլին և Բրիտանին, իւրաքանչիւրին զինում էր ողբերկով խօսքով: Ֆոր մտաւ կայսերական գնացքը, համբուրեց թագուհու ձեռքը, ապա ընդհանուր յուզմունքի ժամանակ, թագաւոր և Ֆոր, սեղմելով միմեանց ձեռքը, համբուրեցին խորին զգացմունքով: Գնացքը հեռացաւ անընդհատ բացակայութիւնների ուղեկցութեամբ:

ՇԱՆՏԻ ԲԱՆԱԿ, 28 սեպտեմբերի: Այս Թագաւոր կայսրի առաջարկած կենացը զինուորական բանակում, Շալունում. «Շէրբուրգի նաւահանգստում, Մեր դալու վայրէջքին, եւ հիմնում էի ֆրանսիական նաւատորմով, այսօր, հիմնաւորված գեղեցիկ երկրից, Նս ուրախութիւն ունեցայ ներկայ լինել ամենահոգեկալ զինուորական տեսարանին, ձեր գեղեցիկ զօրքերի զօրահանդէսին իրանց սովորական փորձերի տեղում: Ֆրանսիան կարող է պարծենալ իր զօրքով: Դուք իրաւացի էք, պարոն նախագահ, յայտնելով, որ երկու երկրները կապված են անփոփոխ բարեկամութեամբ, ձիչդ այնպէս, ինչպէս մեր երկու զօրքերի մէջ զինակից եղբայրութեան խորին ըզգացմունք կայ: Բարձրացնում եմ բաժակը ձեր ցամաքային և ծովային ուժերի համար և խմում եմ հանրապետութեան պարոն նախագահի կենացը:

ԴԱՐՄՇԱՏԱՏ, 28 սեպտեմբերի: Կայսերական Զոյգը ժամանեց այսօր:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԻՍԻՄԱ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ ԶԱՐԳԱՐԵԱՆՑ

Մօակայի կայսերական համալսարանի մանկաբուժական կլինիկայի նախկին օրդինատոր, ընդունում է միայն հիւանդ երեխաներին ամեն օր, ժամի 11 1/2—1-ը: Շաբաթ օրերը՝ ձրի:
Հասցեն՝ Ստարո-Նիսարիտուսկայա, տ. № 13.
№ 103 (շր.) 4—40

Դիւտ քահանայ և Թամար Տէր-Յարութիւնեան Ազանեանցի երկրի վատվ յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին իրանց ամենաուրիշ օրդու, Պետերբուրգի թագաժառանգ Նիկոլայուսեան արհեստագիտական դպրոցի ուսանող

ԵՐՈՒԱՆԻ ԱՂԱՆԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ կարճատե հիւանդութիւնից յետոյ: Թաղումը տեղի կունենայ այսօր, երբ ըշարթի յուզարիւստութիւնը ժամի 10-ին, Տրոյկայա փողոց, տուն Տիւլարէլի, դէպի վանքի մայր-եկեղեցին և այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը: 1—1

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ հայոց վիճակային կոնսիստօրիայի ատենի մէջ նշանակված է աճուրդ այս հոկտեմբեր ամսի 4-ին, առանց կրկնաձրլի, կապաւով ապոււ եկեղեցապատան կղզին, որ գտնվում է վանքի աւագ եկեղեցու հանդէպ: Անդամ կոնսիստօրիայի Գաբրիէլ քահ. Տէր-Գաբրիէլեանց: 1—2

Օ. ՍՈՒՐԻ ՅԻՐԿԸ

Երեքշաբթի, հոկտեմբերի 1-ին, 2-ներ կայացան ցերեկվայ 1 ժամին, յատկապէս երեխաների դուռնութեան համար օգնականներ գտնելով, իրենցվայ ներկա յոցում կայցին 1030 երեխաներ: Երեկոյան 8 1/2 ժամին փայլուն ներկայացումը վերջը կը տրվի «ՍՈՐՈՑ ՈՅ-ԺԸ» կօմիկական պանտօմիմ: Իսկ հինգշաբթի մեծ ներկայացումում Տիկիւնեւրը ձրի են մտնում Շաբաթի, հոկտեմբերի 5-ին, օրիորդ Օլգա Սուրի բէնէֆիսն է: 1—1

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻ ԱՆՉԱՆՑ ՀԱՄԱՐ

Առեւտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զօրճական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ա տ ե ս տ ա ն ե ռ :

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական հիստօրիան, 2) Առեւտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնաթիւ և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանօնադրութիւն և 7) Գեղադրութիւն, վատ ձեռքի ուղղիւր:

Աւսումը սկսվելու է սեպտեմբերի 16-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 2-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլովիտով, Ալեքսանդր Ֆրիդմանի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նազօրնայա փողոցների անկիւնում: Ծրարելը և կանօնները կարելի է ստանալ ձրի ապէս երբ, Ծովանօթների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(Ե. շ.) № 73 23—25